ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Կ-945-23.04.2021-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	*<< կառավարություն*	«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում փոփոխությունները և լրացումներ կատարելու մասին» օրենքի (այսուհետ՝ Նախագիծ) 2-րդ հոդված	Հոդվածով փոփոխվող 6-րդ հոդվածի 3-րդ մասը հանել՝ հաշվի առնելով ներկայումս պահանջի կատարման տեխնիկական անհնարինությունը:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	*<< կառավարություն*	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ	Հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «շահերի բնույթը և ծավալը» բառերը փոխարինել «հանդիսանալու հիմքերը» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է

3.	***<< կառավարություն***	Նախագծի 3-րդ հոդված	Հոդվածում 1-ին մասը լրացնել 3-րդ կետով հետևյալ բովանդակությամբ՝ *«3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 29-րդ մասով՝* *«29՝ Կենտրոնական բանկի կողմից գրանցվող իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ սույն հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով նախատեսված տեղեկությունները պետական ռեգիստրի գործակալությանը տրամադրում է Կենտրոնական բանկը:»:*	Ընդունվել է	Ընդունվել է
4.	***<< կառավարություն***	Նախագծի 5-րդ հոդված	Հոդվածով լրացվող 60.1-ին հոդվածի 1-ին մասում «օրենքի հիման վրա» բառերը փոխարինել «օրենքով սահմանված չափանիշներով» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
5.	***<< կառավարություն***	Նախագծի 5-րդ հոդված	Հոդվածով լրացվող 60.1-ին հոդվածի 2-րդ մասը հանել նախագծից:	Ընդունվել է	Ընդունվել է
6.	***<< կառավարություն***	Նախագծի 5-րդ հոդված	Հոդվածով լրացվող 60.1-ին հոդվածը լրացնել 3-րդ մասով հետևյալ բովանդակությամբ՝ *«3. Սույն գլխի դրույթները չեն տարածվում Կենտրոնական բանկի կողմից գրանցվող իրավաբանական անձանց վրա: Կենտրոնական բանկի կողմից գրանցվող իրավաբանական անձանց իրական շահառուների*	Ընդունվել է	Ընդունվել է

			բացահայտման, գրանցման և տվյալների արժանահավատության ապահովման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ իրավաբանական անձանց գործունեությունը կարգավորող օրենսդրությամբ։»		
7.	***<< կառավարություն***	Նախագծի 5-րդ հոդված	Հոդվածով լրացվող 60.2-րդ հոդվածի 1-ին մասում «իրավաբանական անձի կապիտալում նրանց շահերի բնույթի և ծավալի» բառերը փոխարինել «նրանց՝ իրավաբանական անձի իրական շահառու հանդիսանալու հիմքերի» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
8.	***<< կառավարություն***	Նախագծի 5-րդ հոդված	Հոդվածով լրացվող 60.3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը «ցուցակման» բառից հետո լրացնել «կամ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրման (այսուհետ՝ ցուցակման)» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
9.	***<< կառավարություն***	Նախագծի 5-րդ հոդված	Հոդվածով լրացվող 60.3-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում «այսպիսի իրավաբանական անձի շահերի ծավալի վերաբերյալ» բառերը փոխարինել «այդպիսի իրավաբանական անձի մասնակցության ծավալների վերաբերյալ»	Ընդունվել է	Ընդունվել է
10.	***<< կառավարություն***	Նախագծի 5-րդ հոդված	Հոդվածով լրացվող 60.3-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ *«6) անձի իրական շահառու*	Ընդունվել է	Ընդունվել է

			հանդիսանալու հիմքերի վերաբերյալ և իրավաբանական անձին առանձին կամ իր հետ փոխկապակցված ֆիզիկական կամ իրավաբանական անձի հետ համատեղ վերահսկելու»		
11.	***<< կառավարություն***	Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ	Փոփոխվող հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետում «կապիտալում շահերի բնույթը և ծավալը» բառերը փոխարինել «իրական շահառու հանդիսանալու հիմքերը» բառերով:	Ընդունվել է	
12.	***<< կառավարություն***	Նախագծի 8-րդ հոդված	Հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 66-րդ հոդվածից հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը	Ընդունվել է	Ընդունվել է
13.	***<< կառավարություն***	Նախագծի 9-րդ հոդված	Հոդվածից հանել վերնագիրը՝ այն համապատասխանեցնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջներին:	Ընդունվել է	Ընդունվել է
14.	***<< կառավարություն***	Նախագծի 9-րդ հոդված	Հոդվածը լրացնել 9-րդ մասով հետևյալ բովանդակությամբ՝ *«9. Կենտրոնական բանկը սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին գործող իր կողմից գրանցած իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ տվյալները տրամադրում է մինչև 2022 թվականի փետրվարի 20-ը:»*	Ընդունվել է	Ընդունվել է
15.	***<< կառավարություն***	«Ընդերքի մասին օրենսգրքում» փոփոխություններ և լրացումներ	Հոդվածում օրենքի անվանումը համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ	Ընդունվել է	Ընդունվել է

		կատարելու մասին» օրենքի 1-ին հոդված	հոդվածի պահանջներին:		
16.	*<< կառավարություն*	«Ընդերքի մասին օրենսգրքում» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ	Հոդվածի 1-ն մասի 2-րդ կետով լրացվող 53-րդ կետի «դ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «դ՝ իրավաբանական անձի նկատմամբ իրականացնում է իրական (փաստացի) վերահսկողություն այլ միջոցներով՝»	Ընդունվել է	Ընդունվել է
17.	*<< կառավարություն*	«Ընդերքի մասին օրենսգրքում» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի 12-րդ հոդված	Հոդվածից հանել վերնագիրը՝ այն համապատասխանեցնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջներին:	Ընդունվել է	Ընդունվել է
18.	*<< կառավարություն*	«Էներգետիկայի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի 1-ին հոդված	Հոդվածում «2.1-րդ» բառը փոխարինել «2.1-ին» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է
19.	*<< կառավարություն*	«Էներգետիկայի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի 3-ին հոդված	Հոդվածից հանել վերնագիրը՝ այն համապատասխանեցնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջներին:	Ընդունվել է	Ընդունվել է
20.	*<< կառավարություն*	«Գնումների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի 2-րդ հոդված	Հոդվածից հանել վերնագիրը՝ այն համապատասխանեցնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջներին:	Ընդունվել է	Ընդունվել է
21.	*<< կառավարություն*	«Գնումների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի 2-րդ հոդված	Հոդվածի 2-րդ մասում «գործընթացների» բառից հետո ավելացնել «նկատմամբ» բառը:	Ընդունվել է	Ընդունվել է

22.	*<< կառավարություն*	«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում» լրացում կատարելու մասին օրենքի 1-ին հոդված	Հոդվածում օրենքի անվանումը համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի պահանջներին:	Ընդունվել է	Ընդունվել է
23.	*<< կառավարություն*	«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում» լրացում կատարելու մասին օրենքի 1-ին հոդված	Հոդվածով լրացվող 216.1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «*Հոդված 216.1. Իրական շահառուների վերաբերյալ կեղծ տեղեկություններ ներկայացնելը կամ ներկայացման ենթակա տեղեկությունները թաքցնելը* *1. Իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող իրավասու պետական մարմնին իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացրած անձի կողմից հայտարարագրում կեղծ տեղեկություններ ներառելը կամ ներկայացման ենթակա տեղեկությունները թաքցնելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:* *2. Իրավաբանական անձի մասնակցի կամ իրական շահառուի կողմից*	Ընդունվել է	Ընդունվել է

			իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող իրավասու պետական մարմնին իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձին իրական շահառուների վերաբերյալ կեղծ տեղեկություններ ներկայացնելը կամ ներկայացման ենթակա տեղեկությունները թաքցնելը կամ այդպիսի անձի կողմից ստացված հարցմանը օրենքով նախատեսված ժամկետում չպատասխանելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:»:		
24.	***ՀՀ կառավարություն***	«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում» լրացում կատարելու մասին օրենքի 1-ին հոդված	Հոդվածում օրենքի անվանումը համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի պահանջներին:	Ընդունվել է	Ընդունվել է
25.	***ՀՀ կառավարություն***	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում» լրացումներ	Հոդվածում օրենքի անվանումը համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի պահանջներին:	Ընդունվել է	Ընդունվել է

		կատարելու մասին օրենքի 1-ին հոդված			
26.	***<< կառավարություն***	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում» լրացումներ կատարելու մասին օրենքի 1-ին հոդված	Հոդվածով լրացվող 169.29-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ *«Հոդված 169.29. Իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների բացահայտման կանոնները խախտելը* *1. «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքով սահմանված՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից օրենքում սահմանված ժամկետում իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ չներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հարյուրապատիկի չափով:* *2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված անձի կողմից հայտարարագիրը՝ դրա լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների կամ ներկայացման կարգի խախտմամբ ներկայացնելը՝*	Ընդունվել է	Ընդունվել է

			առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հարյուրապատիկի չափով: *3. Սույն հոդվածի 1-ին մասում նշված անձի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հարյուրապատիկի չափով:* *4. Սույն հոդվածի 1-ին մասում նշված անձի կողմից իրական շահառուների բացահայտման նպատակով պատշաճ ուսումնասիրություն չիրականացնելը կամ իրականացված պատշաճ ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված տեղեկությունները և փաստաթղթերն օրենսդրությամբ սահմանված ժամկետներում չպահպանելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հարյուրապատիկի չափով:* *5. Սույն հոդվածով նախատեսված արարքները կատարած անձն ազատվում է վարչական պատասխանատվությունից, եթե մինչև վարչական պատասխանատվության*		

			ենթարկվելու վերաբերյալ որոշում կայացնելը նա վերացրել է իր թույլ տված խախտումը և իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող իրավասու պետական մարմնին է ներկայացրել ապացույցներ այդ մասին:»:		
27.	***ՀՀ կառավարություն***	«Վարչական իրավախախտումներ ի վերաբերյալ օրենսգրքում» լրացումներ կատարելու մասին օրենքի 2-րդ հոդված	Հոդվածում «223[1]-րդ» բառը փոխարինել «223[1]-ին» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է
28.	***ՀՀ կառավարություն***	«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի 1-ին հոդված	Հոդվածում օրենքի անվանումը համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի պահանջներին:	Ընդունվել է	Ընդունվել է
29.	***ՀՀ կառավարություն***		Փաթեթը լրացնել «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով հետևյալ բովանդակությամբ՝ «Հոդված 1. «Բանկերի և բանկային գործունեության մասին» 1996 թվականի հունիսի 30-ի ՀՕ-68 օրենքի 9-րդ հոդվածում՝ 1) վերնագրում «մասնակցությունը» բառից հետո լրացնել «և իրական շահառուները» բառերով՝ 2) լրացնել 4-րդ մասով	Ընդունվել է	Ընդունվել է

			հետևյալ բովանդակությամբ՝ «4. Բանկը կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղը պարտավոր է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքով սահմանված չափանիշներով բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի իրական շահառու հանդիսացող անձանց վերաբերյալ տեղեկություններ ներկայացնել Կենտրոնական բանկ սույն օրենքով և Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան:»: Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:»:		
30.	*<< կառավարություն*		Փաթեթը լրացնել «Վարկային կազմակերպությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով հետևյալ բովանդակությամբ՝ «Հոդված 1. «Վարկային կազմակերպությունների մասին» 2002 թվականի մայիսի 29-ի ՀՕ-359-Ն օրենքի 10-րդ հոդվածում՝ 1) վերնագրում «սահմանափակումները» բառից հետո լրացնել «և	Ընդունվել է	Ընդունվել է

			իրական շահառուները» բառերով 2) լրացնել 3-րդ մասով հետևյալ բովանդակությամբ «4. Վարկային կազմակերպությունը պարտավոր է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքով սահմանված չափանիշներով վարկային կազմակերպության իրական շահառու հանդիսացող անձանց վերաբերյալ տեղեկություններ ներկայացնել Կենտրոնական բանկ սույն օրենքով և Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան:»: Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:»:		
31.	***<< կառավարություն***		Փաթեթը լրացնել «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով հետևյալ բովանդակությամբ «Հոդված 1. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» 2007	Ընդունվել է	Ընդունվել է

			թվականի ապրիլի 9-ի ՀՕ-177-Ն օրենքի 12-րդ հոդվածում՝ 1) վերնագրում «մասնակցությունը» բառից հետո լրացնել «և իրական շահառուները» բառերով՝ 2) լրացնել 4-րդ մասով հետևյալ բովանդակությամբ՝ «4. Ընկերությունը կամ օտարերկրյա ապահովագրական Ընկերության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված մասնաճյուղը պարտավոր է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքով սահմանված չափանիշներով Ընկերության կամ օտարերկրյա ապահովագրական Ընկերության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված մասնաճյուղի իրական շահառու հանդիսացող անձանց վերաբերյալ տեղեկություններ ներկայացնել Կենտրոնական բանկ սույն օրենքով և Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան:»: Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:»:		

32.	<< *կառավարություն*		Փաթեթը լրացնել «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծով հետևյալ բովանդակությամբ՝ «Հոդված 1. Արժեթղթերի շուկայի մասին» 2007 թվականի հոկտեմբերի 11-ի ՀՕ-195-Ն օրենքը լրացնել 61՝1-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ՝ «Հոդված 61.1. Իրական շահառուները «1. Ներդրումային ընկերությունները, օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերը, կարգավորվող շուկայի օպերատորը, կենտրոնական դեպոզիտարիան, իրավաբանական անձ ներդրումային ֆոնդը, ներդրումային ֆոնդի կառավարիչը կամ օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղը պարտավոր է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքով սահմանված չափանիշներով ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղի, կարգավորվող շուկայի օպերատորի, կենտրոնական դեպոզիտարիայի, իրավաբանական անձ	Ընդունվել է	Ընդունվել է

			ներդրումային ֆոնդի, ներդրումային ֆոնդի կառավարչի կամ օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղի իրական շահառու հանդիսացող անձանց վերաբերյալ տեղեկություններ ներկայացնել Կենտրոնական բանկ սույն օրենքով և Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան:»: Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:»:		
33.	*<< կառավարություն*		Փաթեթը լրացնել «Ներդրումային ֆոնդերի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծով հետևյալ բովանդակությամբ՝ «Հոդված 1. «Ներդրումային ֆոնդերի մասին» 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-245-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ գլխի վերնագրում «մասնակցությունը» բառից հետո լրացնել «և իրական շահառուները բառերով»: Հոդված 2. Օրենքը լրացնել 62.1-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ՝ «Հոդված 62.1. Իրական	Ընդունվել է	Ընդունվել է

			շահառուները 1. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կառավարչի և օտարերկրյա կառավարչի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում մասնաճյուղի և ներկայացուցչության իրական շահառուների բացահայտման հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ ներդրումային ընկերությունների վերաբերյալ համապատասխան դրույթները:»: Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:»:		